

ԻՐԱՎՈՒՆԿ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ԶՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ

Rev. Pere G. Kalemkarian Mechtaristengass
№ 4 Vienn



ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ներկայ 1898 թվականի
Պոլիարիոյ համար տարեկան 12 ֆրանկ
» » վեցամսեայ 6 »
Արտասահմանի » տարեկան 14 »
» » վեցամսեայ 7 »
ԿԱՆՈՒԿ ՎՃԱՐՆԵՒ

Նամակ դրամ եւայլն դրկն հետեւեալ հասցեով
ԽՐԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԼՐԱԳՐՈՅ ՎԱՌՆԱ (ՊՈԼԿԱՐԻԱ)
Редакция на вѣстникъ
„Иравункъ“
ВАРНА (България).

Խոնարհութեան ողորդող գրութիւն
էս չեն դրկուիր եւ յարմար դատարան-
ները միայն կը հրահարակուին ամբող-
ջովին կամ մասամբ:
Խանութեան տոյր 20 սանթիմ. երե-
ֆեկ անգլիական համար 20 0/0
գնդ կը լինի, փոխարեւը կանխիկ:

ԱՆԳԼԻԱՆ ԹՈՂ ԼՈՒ

Ինչպէս կարգադրեալ թերթերու
մէջ, Անգլիոյ զաւակները վերջու-
տին թափ մը տալով իրենց հայա-
սէր զգացմանց, կուգան պատրաս-
տել Գարտիֆի մէջ միթինկ մը,
ուր հոգեւոր Պ. Ճէյմս Պրայս
եւ ուրիշ հայաստանցի պատիւ թա-
փեն իրենց լեզուի բոլոր ճարտա-
րութիւնը, ուսուցիկ ֆրանկներ օ-
գին մէջ ցնդեցնելով որով իրենց
չուրջ հաւաքուած ժողովրդեան
սրտերը ու մտքերն միայն վարկե-
նապէս պիտի յուզեն. թիւեւս այդ
ոգեւորութեամբ խմբագրուած յի-
շատակագիր մը ալ հաճին ներկա-
յացնել Լորտ Սոլզպերիի գահի-
ն. ահա հոս կը հասնի անգլի-
ացի հայաստանեւոր գործունէու-
թեան սահմանը. ասկէ անդին կը
մնայ լորտերու կամ երեսփոխա-
նաց ժողովոյ մէջ հարցապնդումը
ընել, որոյ կը յաջորդէ, շատ շատ
Պոլսոյ անգլիական դեսպանին բա-
րեկամական մէկ դիմումն առ Բ.
Դուռն. ահա պրծաւ ամեն բան.
անգլիացիք այլեւս իրենց պարտքը
կատարած են, հոգ չէ թէ հա-
յաստանի վիճակը միշտ նոյնը կը
մնայ կամ աւելի չարաբաստիկ ե-
րեւոյթ մը կը ստանայ, բաւական
է որ հազիւ թուղթին գինը ար-
ժող ևօրա մը տրուած է Դրան.
ասկէ անդին, էհ, Անգլիոյ նա-
ւերը Արարատի լեռներն չեն կա-
րող բարձրանալ, հետեւաբար Դը-
րան կամ Սոլզպերի բարեացակա-
մութեան կը մնայ հայոց բաղդը
որոշել, իսկ եթէ Անգլիացւոց այս
առ երեւոյթման օգեւորութենէն քա-
ջալերուած մեր ցուցարար յեղա-
փոխականներն ելնեն երկրին ու է
մէկ կէտին վրայ խլրտում մը հա-
նեն, Դուռն ամենայն բարեացա-
կամութեամբ նորանոր կոտորած-
ներու հրահանգներն կը փութաց-
նէ հեգեցելով անգլիական միթինկ-
ներն ու նօթաներն:

Ահա այս ուղիին վրայ ընթա-
ցած է վերջին ութ տասը տարի-
ներու մէջ քաղաքական դէպքե-
րու եւ աղէտներու հոլովումը. Անգ-
լիացին միթինկ կը կազմէ, Հայը
կը խլրտի եւ Տաճիկը կը կոտորէ:

Ասկէ առաջ գումարուած հարե-
րաւոր միթինկներ միշտ այս դառն
փորձը մեզ տուած են, Անգլիացիք
երբ կը պոռչտան Չարի կառավա-
րութիւնը ինքզինքը ստիպեալ կը
զգայ պարզ հասկիստես մնալ.
մանաւանդ ասկէ վերջ աւելի սոս-
կալին կարելի է երեւակայել, քանի
որ Սոլզպերի ծաղրելու յանդըգ-
նութիւնը ունեցող Լորտ Սոլզպե-
րին արդէն առանց կարմրելու իր
ապիկարութիւնը յայտարարեց ը-
սելով «Մեր զրահաւորները հա-
յաստանի լեռներն չեն կրնար բա-
րձրանալ»:

Հետեւաբար հայաստան անգլիաց-
ւոց այս կարգի միթինկներն մար-
դասերական ցոյցեր ըլլալէ աւելի
դարուս յառաջդիմութիւնը հեգ-
նող, քաղաքակրթութիւնը արա-
տաւորող եւ մարդասիրական պար-
տականութիւններն չարաչար գոր-
ծածող երեւոյթներ ըլլալէ անդին
չեն անցնիր:

Մեզ համակրող անգլիացիներն
աւելի լաւ կընեն եթէ զսպեն ի-
րենց կառավարութիւնը որ ար-
գելը չի հանգիստանայ Ռուսիոյ վե-
հափառ Չարի բարեացակամու-
թեան, որ այժմ աւելի տրամա-
դիր կերեւայ Հայաստանի բարե-
նորոգմանց խնդիրը ձեռք առնե-
լու. Մեր դժբաղդ հայրենիքի բը-
նական պաշտպանը ընաւ չի պի-
տի ըսէ «Ռուս զինուորներն Արա-
րատի լեռներն չեն կարող բարձ-
րանալ»:

Այո՛, առ այժմ մենք Անգլիա-
ցիներէ միայն այս բարիքը կըս-
պասենք, որ հաճին համոզել Սոլզ-
պերիի գահիճը Հայաստանի բա-
րենորոգմանց խնդրոյն առթիւ Չա-
րի կառավարութեան իւր սպիտակ
քարթը տալու. սա Անգլիոյ Լը-
ռութիւնը կը նշանակէ. այո՛,
այս պարագայիս մեր իրենցմէ ըս-
պասած բարիքը իրենց անխա-
ղախ լռութիւնն է միայն, եւ մին-
չեւ չի հնչէ որոշ ժամը, իրենցմէ
ոչ բարիք կակնկալինք ոչ չարիք:

Յ. Գ.

ԸՆՏԱՆԻՔԻ ԱԶԳԵՑՈՒԹԻՒՆԸ

Մայրենի պատրաստեմք. այս
խօսքին մէջ անկասկածաբար է
ամբողջ մանկավարժական
դրութիւնը մը:

ՆԱԲՈՒՆՈՒՄ Ա.

Նախորդ յօդուածս վերջացնելով կ'ը-
սէի թէ անիրաւութիւն մը պիտի ըլլար
վարժարանը լոկ պատասխանատու ճանչ-
նալ երիտասարդութեան դաստիարա-
կութեան, քանի որ անիկա ենթարկ-
ուած է ընտանեկան եւ ընկերակա-
ն շրջանակներու կրկին ազդեցութեանց:
Անհրաժեշտ է ուրեմն ուսումնասիրել
այս երկու հաստատութիւնները. նախ՝
անոնց մեր ազգին մէջ ունեցած վի-
ճակն ըմբռնելու, եւ ապա, դաստիա-
րակութեան վրայ ունեցած ազդեցու-
թիւնը հասկնալու համար «Իրաւուն-
ք»ի յարգոյ ընթերցողները թո՛ղ բա-
րեհաճին թոյլտուութիւն ընել ինձ մի-
այն ընտանիքին վրայ դրել այս ան-
գամ. որովհետեւ եթէ յայտնի ճշմար-
տութիւն մըն է մեր վարժարաններու
բարեփոխութեան կարօտ ըլլալը, եւս
աւելի անուրանալի է թէ հիմնական
վերանորոգման կը կարօտին մեր ըն-
տանիքները, ուր միջնադարեան բար-
բարութիւնն իր բոլոր ձեւերով կը
տիրէ մինչեւ այսօր:

Հակառակ կարգ մը ընկերաբաններու
որոնք ընտանիքի արդի կարգակերպու-
թեան վեհաստեղար տարրերէն մին կը
նկատեն, առանց սխալելու կրնանք
պնդել թէ ան սկիզբէն ի վեր կոչուած
է մարդկային յառաջդիմութեան ամե-
նագոր ազդակներէն մէկն ըլլալու:
Այնպէս վրայ ապրող կենդանի էակ-
ներուն մէջ մարդը ամենէն տկարն ու
անպաշտպանն է անհրաժեշտաբար կա-
րօտ ուրիշի խնամքին, առանց որուն
վարկեան մը իսկ չի պիտի կարողանար
ապրիլ. Առաջին օրէն իր անձին ըս-
պառնացող հազար ու մէկ վտանգներու
դէմ մերկ ու անդէն՝ բացառակապէս
անկարող է հայթաթել իր զաղբաղ-
բուն գոյութեան անհամար պէտքերը:
Ոչ իր անդամները կրնայ գործածել
չարժեքու, ոչ աչքերը դիտելու. եւ այս
անկարողութիւնը շատ երկար կը տեւէ:
—Ո՞վ պիտի սորվեցնէր մանուկին իր
առաջին քայլերն ուղղել կեանքի մէջ,
թոթովել իր թոյլ ու անորոշ կամքն
արտայայտող նախնական անկերը.
տալ առարկաներու վրայ վեհաստեղար
ու օգտակարը զանազանող տարրական
ծանօթութիւնները: —Ոչ անշուշտ դպ-
րոցը ուր շատ ուշ կը մտնէ, եւ ոչ ալ
չհամով ու հասէր աշխարհը որ «կը
պատժէ բայց չուղղեր»: Ընտանե-
կան այս անդամիկ դաստիարակու-
թիւնը եթէ պակսի, անդամանիկ կո-
րուստ մը կը պատճառէ որուն տեղ ու-

չինչ կրնայ բռնել. Ու ինչպէս դարա-
ւոր ծառը իր երիտասարդութեան ատեն
ստացած կորութիւնը միշտ կը պահէ,
նմանապէս մանկութեան առաջին սո-
վորութիւնները երբեք չեն ջնջուիր եւ
միշտ կը պահեն սկզբնական պակասին
անջնջելի հետքերը. եւ եթէ աչքէ ան-
ցնենք անհատներու կամ նոյն իսկ ազ-
գերու պատմութիւնը որքա՛ն մոլու-
թիւններ, որքա՛ն ոճիրներ անգամ
պիտի գտնենք որոնց սկիզբը այս ա-
ռաջին մեկնակէտին մէջ պէտք է փն-
տել:

Մարդ իր բարոյական կեանքին հա-
մար ալ իր նմաններուն հետ առհասա-
րակ ունեցած յարաբերութիւններէն
աւելի անուշ եւ աւելի գգուող չգիտմի
մը պէտք ունի: Արդարեւ, մարդ բնաւ
չը պիտի յառաջանար եթէ կորուսած
ըլլար ամբողջին մէջ առանց երբեք ա-
ւելի սերտ կապ մը, աւելի մտերմ
ընկերութիւն մը, որոշ եւ չօչափելի
նպատակ մը գծելու իր կեանքին եւ
սրտին տալու աւելի դրական սնունդ
մը: Ընտանեկան յարկին մէջ է որ ա-
մենքս մեր առաջին ուրախութիւնները
կը վայելինք. հոն՝ առաջին անգամ կը
ծաղկի եւ ինքզինքին գիտակցութիւնը
կը ստանայ մարդկային միտքը որ թա-
քուն բոց մըն է նորածինին մէջ: Ազ-
գերը մանկանոցներու մէջ առաջ կու-
գան, ըսած է Անգլիացի գրագետ մը,
եւ մանուկներու առաջին քայլերը դե-
կալարել կոչուած անձինք թիւեւս ա-
ւելի ազդեցութիւն ունին քան թէ կա-
ռավարութեան սանձը բռնող մարդիկը:

Մանուկը այն առաջին տարիներու
մէջ ուր դեռ նոր արտաքին աշխարհի
սպաւորութիւնները իր նորածին դա-
տուութեան առարկայ պիտի ըլլան, կը
ձգտի ամէն բան ընդօրինակել. լեզու,
սովորութիւն, շարժում եւ վարմունք
օրինակ է անոր համար. Օրինակի ա-
մենամեծ կշիռն ունի նկարագրին կազ-
մութեան մէջ, եւ եթէ կուգե՞նք ըն-
տիր ու լաւ նկարագրներ պատրաստել,
պարտաւոր ենք ընտիր օրինակներ ցոյց
տալ: Արդ՝ մանկուն առջեւ միշտ ներ-
կայ գտնուող գերագոյն կենդանի օրի-
նակը մայրն է, ընտանիքին «Բեւեռա-
յին աստղը եւ սրտերու մագնէսը», ո-
րուն շուրջը կը դառնան միւս բոլոր
մեծ ու փոքր անդամները. նա միայն
անշարժ է, Գնդոյ մանուկը խաղաղ
ու ապահով կը ննջէ մայրական ծոցին
մէջ ուր վստահ է մարմնոյն ու հոգւոյն
սնունդը միանգամայն գտնելու: Անըս-
պառ սէր մը, կիրքի պէս կենդանի,
խղճի պէս մաքուր, իմաստութեան պէս
հեռատես, ամէն ժամ ու ամէն վայր-
կեան կը հսկէ առանց ընդմիջումի ա-
նոր վրայ եւ կ'ուռնանայ կարծես որ-
քան նորածինին կը հազորդէ ինչ որ
ունի լաւագոյն: Այս մշտական ու ան-

խոնջ գործին է որ կ'առաջնորդէ փոքրիկին դեռաբոյս խմացականութեան անդրանիկ նշոյլները եւ իր լեզուին առաջին կակաջուները: Մայրական սէրը կեանքի արշալոյսին կը սկսի եւ կը տեւէ մինչեւ գերեզման. ու երբ անոր վրայ աւելնայ հոր գորովը, որ ոչ այնքան ներոյժ քայց նոյնքան անկեղծ է, երբ, իւր քայլերը առաջնորդող երկու ձեռք միանգամայն գտնէ, ինչպէ՞ս պիտի զօրանայ հագուով ու մըտքով: Իր իմացական բոլոր կարողութիւնները պիտի յառնեն, իր նկարագիրը պիտի կազմուի, իր բարոյական անհատականութիւնը պիտի սկսի դրոշմուիլ իր դիմագծին վրայ եւ իր ապագայ կեանքի անխախտ հիմերը պիտի հաստատուին: Այս նախնական դաստիարակութիւնը որ օրօրոցէն կը սկսի էական խարխիւն է որուն վրան մանկան ապագան պիտի կառուցուի. այս շրջանին մէջ կը կատարուին ամենաթանկագին յատկութիւնները զորս կարելի է գտնել ժամանակի յաջորդական խաւերուն տակ ինչպէս չքաղարմի դրօշմը զայն ծածկող ժանգի տակ:

Բայց մանկութեան մէջ միայն չէ որ ընտանիքը անհրաժեշտ է: Ընտանեկան դաստիարակութիւնը իր հզոր ազդեցութիւնը կը շարունակէ մինչեւ կեանքի վախճանը: Մանուկը երբ երիտասարդ կ'ըլլայ, հոն կը գտնէ իր մէջ կոռուի սկսած կիրքերու գէժ զօրավիգ ու ապաստան մը. զէնքեր աշխարհի փորձութեանց եւ երիտասարդութեան հերքալորներու գէժ: Կանքի փոթորկայոյց հոսանքին մէջ երբ վերահաս վիշտներն ու դառն ազդեցութիւնը զինք ընկճեն, երիտասարդը մայրական անփոխարինելի սիրոյն մէջ կը գտնէ իր յուսահատ հոգւոյն մխիթարութիւնը:

Դաստիարակութիւնը էապէս երկու բանի մէջ կը կայանայ. զարգացում հոգիի ու անքի բոլոր կենդանի ուժերու եւ անոնց կառավարութիւնը գէժ կամ ներդաշնակ ուղղութիւնը գէժ կամ չէ: Այս կրկին տեսակէտով ալ ընտանեկան մթնոլորտը անհրաժեշտ է երիտասարդին ինչպէս մանկան, եթէ ոչ նոյն աստիճանով գէժ նոյն շարժառիթներով: Եթէ այս կենդանի ուժերը առանձին ձգուին չփոթութիւն ու անկարգութիւն առաջ պիտի բերեն ոմանք բարոյական ոմանք ֆիզիքական աշխարհի մէջ: Աշխարհը անխոնջ արտադրող

մըն է, ըսած են, որ անդադար ընկերական շրջապատութեան մէջ կը նետէ մեծ կոյտ մը այս կենդանի ուժերէն որոնք կը կորսուին ու ամուլ կը մնան եթէ մնասական չըլլան ընկերութեան: Երիտասարդութիւնը՝ ապրելու տենդով վառուած՝ կը կարծէ թէ ամբողջ աշխարհ իրեն համար ստեղծուած է. իր անյագ հետաքրքրութեան մէջ, կ'ուզէ ամէն բան տեսնել, ամէն բան փորձել, ամէն բանի միանգամայն տէր ըլլալ. եւ իր հոգւոյն այս արամադրութիւնը իսկոյն եսասիրութեան եւ կամապատկեման կը փոխուի աշխարհային ցանկութեանց կոյր ազդեցութեամբ: Անգամ մը որ հոգին շաղխուի այս մոլութեամբ, ա'լ չի ձգեր անոր օժիւրը: չափաւորութիւնը, սնտափառութիւնը, ընչաքաղցութիւնը, բոլոր անարգ ու աղտոտ կիրքերը կ'ուզան հետզհետէ դրաւել ու քանդել իր հոգւոյն բոլոր հիմերը: Որքան երիտասարդներ այս ալիքով ուղիւն ունեն մէջ կը մտնեն կորսուելու համար ուղեցոյցի մը պակասութեան պատճառաւ, իրենց անձին տիրանալու, իրենց գէժ միշտ մաքառող կիրքերուն իշխել անվարժ ըլլալով: Եսասիրական կիրքերու այս աւերումներուն գէժ միակ ազդու արգելք մը կայ. այն է ճշմարիտ ու մաքուր սէրը: Ներշնչել տղուն որ կանխաւ տիրանայ սրտին ու պահպանէ մոտքը: Ու դարձեալ ընտանիքին մէջ է որ կը գտնէ զայն: Եթէ իր մանկութեան ատեն վայելած է սէրն ու չէ վճարած, հիմայ պիտի զգայ իր որդիական պարտականութիւնը կատարելու ժամանակին հասած ըլլալը, չի պիտի ուզէ ապրախտ տղուն յորջորջման արժանանալ, ինչ որ իր սիրտը պիտի չարչրկէր: Ընտանեկան յարկին պարզ ու կենդանի դասերուն մէջ երիտասարդը պիտի գտնէ արգելարան մը ամէն անոնց գէժ որոնք կրնան իր սիրտը մոլորել եւ իր հոգին եղծանել:

(Շարունակելի) ԼԵՒՈՆ ՍՍՐԳՍԵԱՆ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԿՐՈՒԹԵԱՆ

Կը խնդրենք որ հաճիք իրաւունքի մօտակայ մէկ թուոյն մէջ հրատարակել ներփակեալ հաշուեցուցակը, որ կը պատկերացունէ

Անոր յոգնած ու միանգամայն խոհուն դէմքի հրաշալի ձուածենն ու զմայլելի ճերմակութիւնը, քընքըն սիրունութիւնը ճակատին որ այնքան տկար կը թուէր իր թաւտ ու սեւ մազերու ծանր սաղաւարտին տակ, անոր ճկուն հասակի ու աղուոր պարանոցի դիւրաթեք գիծերը, բոլոր ասոնք կարող էին է՛ն խստակեաց մարդուն անգամ ուշադրութիւնը հրաւիրել:

Փախուստի խուճապը ա'յնպիսի տրտմութիւն մը դրած էր անոր անվրդով կիրպարանքին վրայ որ մարդ հիացումի չափ նաեւ կարեկցութիւն կըզգար իտեա այդ չքնաղ և տխրանոյշ պատկերին:

Շոգենաւը կը սահէր արագ, ճերմակ փրփուրներու խոշոր պապառների նետելով իր երկու կողմը: Աղանի կամրջակին վրայէն բնութեան գեղեցկութիւնը կը գիտէր աչքը նետած անհուն ծովի հանդարտ տարածութեան վրայ ուր զիւրեւը կը սահէր մեղմօրէն և

փերջին մայիս ամսոյ մէջ քաղաքէս ի Պօլիս վերադարձող անդործ ու չքաւոր հայ գաղթականաց համար կատարուած հանգանակութեան ցանկն ու ծախուց մանրամասնութիւնը:

Յանձնախումբս Պուրկաղէն, ծովու ճամբով ըստ կարի դիւրագնի կատարել կ'որենալու համար գաղթականաց և իրենց կարասեաց և զոյքերու փոխադրութիւնը՝ դիւմուսներ ըրաւ նոյն Արեւելեան Երկ. Ընկերութեան կիւր. վարչութեան ի Պօլիս և ապա՝ Պուրկար կառավարութեան: Արեւելեան Երկաթ. ընկերութիւնը խաբեպատիր հաճոյակատարութեամբ շահագործեց զմեզ. իբր նուազագոյն գին 583 ֆր. 27 1/2 վարձք առնելով մենէ ֆ Պօլսէն մինչեւ Եամպօլի, (200 քիլոմէթր), 2 ապրիլի վախճան համար որոնց մէջ ալ ու կին, ծեր ու տղայ իրենց գոյքերով միասին լեցան մեր հէգ գաղթականք խառնիխուռն: Իսկ Եամպօլէն Պուրկաղ Պուրկ. Երկաթ. ընկերութիւնը 112 քիլոմէթրի համար 95 ֆր. 02 1/2 սանթիմ միայն առաւ, Գ. կարգի վախճաններ տալով անոնց, զատ վախճանի մէջ ընդունելով կարասիներն՝ որոնց փոխարէն Եամպօլուի կայարանը վճարուած 44 ֆր. 75 սանթիմ գու. մարն ու Պուրկաղի կայարանը վճարուած 16 ֆր. 75 սանթիմ գու. մարն, մեր մէկ խնդրագրոյն վրայ՝ Նախարարական հրամանով մեզի ետ տրուեցան:

Պուրկար կառավարութեան այս վեհանք վարմունքին համար մեր խորին երախտագիտութեան դուք ալ թարգման հանդիսացէք և ընդունեցէք մեր յարգանաց հաւաստին:

Ի դիմաց գաղթականաց առաքել Յանձնախումբի

17/26 Օգոս. 98 Ա. փանոսեան ֆ. Պօլիս Խալիկ Թագուր Կարապետ Նարեկ

Սոյն Յանձնախումբի հաշուեցոյցը պիտի հրատարակենք յառաջիկայ թուով: (Մ. Խ.)

ուր ոսկի կոհակներ՝ տարտամվէտ վէտումներով՝ կերգէին իրենց չքնաշխարհիկ մեղեդիները: Արմենակ, սրտանուէր վարուժան, քայլ մը չէր հեռանար կնոյմէն և լռիկ կը մտածէր թէ ինչպէս պիտի կարողանայ դարձեալ երջանիկ ընել զանի:

Քիչ մը հեռու, կամրջակի մէկ անկիւնը, կծկտած մնացած էր հաստափոր, կլորիկ մարդ մը որուն գիշերուան պէս սեւ ու խորունկ աչքերուն մէջ հրաբուրդ ու աղտոտ հոգի մը կ'արտափայլէր կարծես:

Ասիկա՝ իր այրատ նայուածքով կը սրբապղծէր այն անմեղութիւնը որ կը փայլէր Աղանի վարդածին այտերուն վրայ: Իր վառ իմառ ջնոքներով լցուած կրակոտ սիրտը կը գալարուէր սաստիկ, քանի կը խորհէր թէ անմատչելի է իրեն այդ քնքուշ ու թարմ էակը որուն կոկոն շրթունքին մէկ ժպիտը յափշտակելու համար կը

ՎԻՃԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Քաղաքիս աղկանց Ազգ. վարժարանին ձեռագործներու վիճակահանութիւնը ամսոյս 16/28 ին կատարուեցաւ, որոյ արդիւնքը ի ստորեւ հրատարակելով կը խնդրէ հոգաբարձութիւնս շահող թիւերն ունեցող անձինքներէն, որպէսզի, բարեհաճին մինչեւ նոյեմբեր 1 զրկել տոմսակնին ու ստանալ շահած ձեռագործը:

Ի դիմաց հոգաբարձութեան Գանձապետ Մ. Ն. ԳԱՐՐԻԷԼԵԱՆ 1898 Օգոստոս 19 Տպարիչ

Ազգ. Գանձ	Գանձ	Ազգ. Գանձ	Գանձ	Ազգ. Գանձ	Գանձ
Ազգ. Գանձ	Ազգ. Գանձ	Ազգ. Գանձ	Ազգ. Գանձ	Ազգ. Գանձ	Ազգ. Գանձ
2	26	149	53	285	67
3	57	157	72	289	14
9	7	168	96	293	20
14	100	169	74	299	81
16	31	171	46	302	49
24	41	173	24	305	16
34	5	176	75	310	28
38	25	180	56	319	4
39	51	196	70	320	58
41	82	201	78	323	45
48	94	206	73	323	43
50	1	207	91	326	77
54	84	215	98	329	59
58	19	219	44	332	11
69	93	222	32	333	71
70	36	227	50	335	9
71	69	229	30	339	79
72	89	236	10	340	76
73	35	238	13	341	97
75	37	240	54	342	3
86	85	245	34	343	99
87	80	246	60	351	55
90	42	258	86	363	92
91	23	259	18	365	33
93	61	260	39	371	52
94	83	261	63	375	68
95	3	262	90	377	47
124	65	263	27	384	48
127	62	265	66	387	64
132	21	269	95	392	29
135	87	271	15	396	8
136	40	274	101	398	38
139	22	281	6	400	88
148	17	284	12		

պատրաստուէր ամեն յանդգնութեան դիմել:

— Տարակոյս չունիմ որ հայ է, մալտաց ինքն իրեն, թերեւս կողպտուած չքաւոր մը նոյն իսկ Օհ, ան ատեն իմ ոսկիներս կրնան հրաշք անգամ գործել. . . ու Ու յանկարծ ցատկեց նստած տեղէն, և վարանոտ քայլերով, օձի մը խորամանկութեամբ, սկսաւ մօտենալ ջուխտակ սիրողներուն, որոնց հետ վճռեց խօսակցութիւն մը ունենալ:

Ամբողջ ցանկութիւնն էր հիմա նայուածք մը մուրալ, բառ մը լըսել այն հրաշալի արարածէն որուն սիրով ու բարութեամբ արբշտ սիրտը սակայն նուիրուած էր համակ իր սիրատարի սիրականին:

Կը սրբօրար մարդը, սակայն Արմենակի ներկայութիւնը կը սասնաւորէր անոր ամենաբուռն կիրքը: Փոխն ի փոխ երեսին գոյնը կը կարմրէր ու կը ճերմկէր, ուղեղը ճաթելու կը մօտենար, յառաջան մը կը փնտռէր մտքովը:

ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆ
ԱԶԳ. ԵՐԿՍԵՆՈՒ ՎԱՐԺԱՐԱՆԱՅ
ՎԱՌԱՆԱ

Ա. Զ. Դ.

Տիգրանյան Ազգ. երկսեռ վարժա-
րաններու բացումը տեղի պիտի
ունենայ յառաջիկայ Սեպտեմբեր
1 ին. ուստի այս առթիւ Հոգա-
բարձութիւնս կը փութայ ծանու-
ցանել արդոյ Հասարակութեան՝ որ
հաճին ամսոյս 23 ին, կիրակի ա-
ռաւոտ ժամը 10-12 ներկայանալ
Թաղ. Խորհրդարան իրենց զաւա-
կաց անուններն արձանագրել տա-
լու:

Ի դիմաց Հոգաբարձութեան
Ա. Տեմապիտր Ա. Տեմապիտր
Գ. ԿԻՒԼՊԵՏԻՐԵԱՆ Թ. Մ. ԹՈՎՄԱՍԵԱՆ
Վառնա, 21 Օգոստոս 98:

ԼՐԱՔԱՂ

Վիլհելմսորֆի մէջ բարեսէր
գերմանացիներէ ապաստան գտնող
և մեր ազնիւ բարեկամ Տիար Կա-
յանի Հոգաձուլութիւնը վայելող
հայ որբեր խմբագրութեանս նա-
մակ մը գրած են. և մեզ կաւե-
տեն թէ Հայրենիքի սրբազան
սէրը իրենց սրտին մէջ վառ եւ
անչեղ պահել ուզելով, հաստատած
են Հայկ գրագրարանական ընկե-
րութիւն մը և փոքրիկ գրագրա-
րան մը, որ հետզհետէ պիտի զե-
տեղւորին նշանաւոր Ազգ. գրագէտ-
ներու, Գամառ-Քաթիկոսի, Ռաֆ-
ֆիի և այլոց, հեղինակութիւններն
ու հայրենաշունչ երկերն. հասոյ-
թի իբր գլխաւոր աղբիւր նամա-
կագրողներու վաճառումը նկա-
տելով, կը խնդրեն որ բարեսէր ազ-
գայինք հաճին պուլկարական,
բովանակական և եղիպտական գոր-
ծածուած բուլիւր և քարթ. բոստեր
իրենց խրկել:

Հասցէ

Հազար Մանուկեան

Վիլհելմսորֆ (Վիլթեմպերկ)

—Հայ էք, հարցուց վերջապէս:
Երկուքը մէկանց մարդուն երեսը
նայեցան, կասկածի ու տեսակ մը
երկիւղի սարսուռն ազդեցութեան
տակ, Արմենակի աչքերը ալ ու
ձախ խաղալ սկսան: Անձանգթ
մարդուն դիմագծութիւնը՝ այս ա-
ռաջին առթիւ, ամենավատ տը-
պաւորութիւն մը թողուց իր վը-
րայ: Բնազդով մը կարծես կը
հասկնար, թէ փտանգաւոր, սոոր
արարած մըն է խօսակիցը: Մինչ-
դեռ Աղաւնի, հեղութեան և պար-
կեշտութեան այդ տիպար էակը,
առանց այլայլումի, շնորհալի ձե-
ւով մը փութաց, պատասխանից
մարդուն:

Անձանգթին ուրախութիւնը ան-
սահման էր: Կէս ժամ յետոյ եր-
կու կողմէն իրար դիմար կը ճան-
չընային այլ ևս: Բնիկ Ա. . .
քաղաքէն էր մարդը, դիրքի տէր
ազդեցիկ մենծ աղա մը որ ճշմար-
տապէս զգածուած կ'երեւար հիմայ
երիտասարդ ամուլի սրտածմլիկ վի-
ճակին վրայ:

—Ամերիկայի այցելու հովիւ Տ.
Վաղինակ վարդապետ փրօվիտէն-
սէն Նիւ Հէյվըն գացած, և կի-
րակի (օգոստոս 7ին) Ս. պատա-
րագ մատուցած է. որբերի հա-
մար 25 տոլար հաւաքած և այն-
տեղի հայոց համար մի գրադա-
րան կազմած է: Վարդապետը հե-
տեւեալ օրը Նիւ Պրիթըն ալ եր-
թալով, հոն եւս քարոզած և որ-
բերու համար 27 տոլար հաւաքած
է:

—Կիմանանք թէ Պուլկարիոյ
ալիւսալ քաղաքաց և Քէօստէն-
ճէի մէջ գտնուող Հայ-բողոքական
քարոզիչներն Ռուսոսէզ հաւաք-
ուելով ամսոյս 26ին ժողով մը պի-
տի գումարեն, ուր իրենց խորհր-
դածութեան առարկայն պիտ ըլ-
լայ գլխաւորապէս իրենց բռնելիք
ուղղութիւնը վարժարաններ և փո-
ղովարաններ հաստատելու մասին
ժողովը պիտի կազմուի հետեւ-
եալ Պատուելիներէ

Տեարք

Ա. Ամիրխանեանց

Հայկ Եարտըմեան

Տիգրան Շահվէլետեան

Պատուական Թարաւեանց

Սմբատ Պաղտասարեան

Գրիգոր Գեորգեան

Այս առթիւ Պատուելիներուն
ուշադրութեանը կուզենք ընծայել
սա կէտը թէ հայ ժողովուրդը
այժմ ծէսային և եկեղեցական խրժ-
բութիւններէ ու վարդապետութիւն-
ներէ աւելի՝ որք միայն պոռակ-
տում առաջ կը բերեն, միութեան,
միահամուռ համախմբման ու գոր-
ծունէութեան պէտք ունի:

—Նոր. Դարի մէջ կը կարգանք
հետեւեալը զոր «կաւկազ» էն կար-
տատպէ:

«Թիֆլիսի Էրզ. քաղաքամասի
պրիստաւը օգոստոսի 7ին երեւան
է հանել մի գաղտնի խոսակցան
ոռնոմնարան (ընդգծումը «կաւ-
կազ» ինն է), որ գտնուում էր Հաւ-

Բարութեան և կարեկցութեան
սրտայայտութիւն մը ստացած կը
թուէր դէմքը. գոցէ զղջացած
էր իր վատ մտածութիւնուն հա-
մար նշմարելով որ Աղաւնիի սըր-
տին մէջ կարող չէ բնաւ մուտ
գտնել ցածութիւնը: Տարօրինակ
արգահատանքով մը լցուած, հայ
տառապեալի մը արցունքը սրբե-
լու զուտ ընկերական մտածումով
մը կարծես, խոստացաւ ամեն կա-
րիկի աջակցութիւն շնորհել Արմե-
նակի ընտանիքին, եթէ միայն
հաճին իրենց կարօտութեան մէջ
գիմել իր հասցէին, զոր չի մոռ-
ցաւ նշանակել տալ: Ալ երեքը
անբաժան դարձան, մտերմեան
յատուկ վառ խօսակցութեամբ
մոռցան թէ զիշերուան ժամը
կը սահին, կիրթան:

ՎԱՅԱՆ ԵԱՅՐԻՄԱՆ

(Շարունակելի)

Լաւարի Հազարեակայ փողոցում
Թաթուզովի տանը, թիւ 75: Այս
ուսումնարանը, որի մէջ պրիստա-
ւը 7—15 տարեկան 30 աշակերտ
գտաւ, պահում էին եղբարք Ար-
սէն և Վարչամ Զաքարեան Սիմէ-
օնեանցները: Սրանցից առաջինն
յայտնեց, թէ իւր ուսումը աւար-
տել է հայոց Ներսիսեան դպրա-
նոցում, բայց պրիստաւի պահանջ-
ման համեմատ չկարողացաւ ոչ մի
գրաւոր վկայական ներկայացնել,
իսկ վերջինն աւարտել է Անդրկով-
կասեան երկաթուղու արհեստանո-
ցը: Սրանք դաս էին տալիս՝ «Հա-
յաստանի պատմութիւն», (չակերտ-
ները «կաւկազ» ինն են) աշխար-
հագրութիւն, հայոց լեզու և ուր-
սաց վայելչագրութիւն: Գրքերն
ու տետրակները գրաւեցին, ու-
սումնարանը փակուեց, որի մա-
սին պատշաճաւոր արձանագրու-
թիւնը ներկայացուած է պ. ոս-
տիկանապետին:

Սիմէօնեան եղբարք կը յայտա-
րարեն թէ իրենց բարեկամներու
միջանի զաւակները կը պատրաստե-
ին Ռուսաց ուսումնարաններու և
Ներսիսեան դպրոցի համար, բայց
օրէնքը 10 աշակերտէ աւելի չի
թոյլագրեր եղեր:

—Այս չորեքշաբթի (19 օգոս-
տոս) Սուլթանի գահակալութեան
տարեգարձին առթիւ Ազգ. Պատ-
րիարքարանը մայրաքաղաքի բո-
լոր եկեղեցեաց քարոզիչներուն,
աւագերէցներուն, վարչական փո-
ղովներուն և Թաղ. Խորհրդոց հը-
րաւէր կարգացած է որ նոյն օրը
ժամը 3 1/2 ին ներկայ գտնուին ի
Պատրիարքարան, ուրկէ Մայր
Եկեղեցի իշխալով բարեմաղթու-
թիւններ պիտի ընեն Սուլթանի
կենաց:

Բայց ի՞նչ սրտով . . .

—Ստեփան փաշա Ասլանեան ո-
րուն յանձնուած էր խառնակի
Գալֆայեան Որբանոցի բարեկար-
գութեան գործը, այցելելով իշ-
եալ հաստատութիւնը տեղեկագիր
մը մատուցած է Ս. Պատրիարքին,
որուն մէջ յիշեալ հաստատութիւնը
հիմնովին բարեկարգելու համար
կարգ մը առաջարկութիւններ կը
ներկայէ:

Ն. Սրբազնութիւն այդ առա-
ջարկութիւնները օրինաւոր դատե-
լով խնդրած է Ստեփան փաշայէն
որ անոնց գործադրութեան հոգն
ալ ինք ստանձնէ:

—Ուսուցչութեան ընտրելիներու
քննիչ Թանձնաժողովը օգոստ. 14ին
իր Երզ. նիստը գումարեց Բերայի
Արհեստանոցին մէջ, նախագա-
հութեամբ Տ. Գեորգեանի սկսող
Երէցեանի և առնանապետութեամբ
Սուրենեան Աւետիս Էֆ. ի, և կա-
տարեց 40ի չափ երկսեռ ընտրե-
լիներու քննութիւնները ուսուցչու-
թեան և ձեռագործի ճիւղերու մէջ:

—Ազգ. Հիւանդանոցի Հոգա-
բարձութիւնը, որ եռանդուն կեր-
պով գործի սկսած է, այդ մեծ
հաստատութեան հիւանդարանի ու

յիմարանոցի բաժինները իր անմի-
ջական հոգաձուլեան առարկայ
ընելով՝ որոշած է բժշկական քըն-
նութիւն մը հաստատել որ կանո-
նաւորապէս պիտի կատարուի շա-
բաթը մէկ անգամ: Կը լսենք թէ
քննիչի պաշտօնը առաջարկուած
է Տօթթ. վահրամ Թորգոմեան
էֆէնտիին որ սիրայօժար ընդու-
նած է զայն:

—Արմաշու Գպրիվանքին բարձ-
րագոյն կարգի 18 աշակերտներէն
վեցը օգոստոս 23ին, կիրակի օր
սարկաւազ պիտի ձեռնադրուին,
որոնց նուիրուելու համար՝ Ս. Պատ-
րիարք Հայրը իր կողմէ թաւշեայ
ուրարներ պատրաստել տուած է:
Այդ ընծայացուններն են՝ Մշեցի
Խաչատուր, Եէնիճէցի Եփրեմ,
Արսլանպէկցի Բարունակ, Ամա-
սիացի Տիգրան և Օհան և Սեբաս-
տացի Քերոբէ:

—Շուվայի ազգայնոց մէջ կը-
ւիւններ ծագած լինելու տարածա-
նութիւններն անհիմն են եղեր:
Նոյն քաղաքի Հոգաբարձութիւնը
կը յայտարարէ թէ ազգայնոց մէջ
կատարեալ համաձայնութիւն և
համերաշխութիւն կը տիրէ: Առ-
այդ ուրախ ենք ուրեմն:

ՐՈՒՍԻԱ և ԻՆԿԻԼԹԵՐԱ
ՉԻՆՏԷ

Շու սըրա ագսաի Շարգտա
րուս վէ ինկիլի բօլիթիգաուր եէք-
տիկէրինէ գարշը բէք կէրկին պիր
հալ քէսպ իթմիշ տիր:

Պու իքի պէօյիւք տէվլէթյէր
կիւնպէ կիւն Չինտէ թէէսիւրէրի-
նի արթըրմագ վէ պիւթիւն Չին
մէմալիքինի քէնտիլէրինէ վէ թա-
պաւարընա պիր թիճարէթկեհհ
իթթիխազ իթմէք էմէլի իլէ պիր
պիրինի թէգատտիւմ իթմէք ի-
չիւն հէր սաաթ բէգապէթէ տէ-
վամ էլլէմէքտէ տիրէր:

Ինկիլթէրա Չինտէ պիր իմթի-
յազ վէ պիր մէղունիլթէ էլտէ ի-
տէճէկի սըրաուա, Բուսիւնըն պիր
թէքմէսի իլէ հէր շէյ թէպտիլ օլ-
մագտա: Պախուսուս ախիւրէն նէվ
Շանկ չըմէնտըֆէրին ինչասը մե-
սէլէսիւտէ րուս էլլիսի Մ. Բալ-
լօֆըն միւտախէլէսի ինկիլիլէրին
մէնֆաաթընա գարշը պիր սէթ
չէքմէքտէ օլտըղընտան, պունտան
էվվէլ Սօլպպէրի հէրնէ գատար
նութգլարընտա Չինտէ Բուսիւ
բօլիթիգաւրնտան տօլայը սուրէ-
թի միլայիմէտէ պէյանը Էֆքեար
էլլէմէքտէ իտի իսէտէ, պու տէ-
ֆո նիհայէթ ինկիլթէրա էլլիսի
Սըր Մագտօնալտ քէսկին պիր լի-
տանլէ «Թալէպլէրիմիլ րէտտ օլու-
նուր իսէ, պու րէտտ մուհարէպէի
տէլալէթ իտէճէք,» տէմիշ տիր:

Ինկիլիլ էլլիսի Չին հիւքիւմէ-
թինէ պու թէհտիտաթը իթմէզ-
տէն պիր գալ կիւն էվվէլ, Ալմա-
նիա էլլիսի տախի՝ Չինճինտէն
Շինքեանկա եաբըլաճագ չըմէն-
տըֆէր խաթթընըն իմթիյաղը

Տօքթօր Եանկ-Վենկէ վերլուծեց իսէ Շանթանկտան չէքիւնէկինի իւթար իթմիշ տի :

Պու իքի տէվլէթին ըուս մէնա- ֆիսինէ ու թէէսիրինէ գարշը Սէ- մալի իմբէրաթօրը (*) թէհտիտ իթմէլէի աֆազը սիյասիյէի Շարգտան Ղարպա գատար պու- լուտլարէ իհաթէ իտէպիլէնէք տիր : Ինկիլթէրա Ձին իշէրինտէ Ճարօնիայը քէնտիսինէ պէնտ իթ- միշ օլտըղը կիպի , Սլմանիա իլէ տախի պու հօլտա : Իշթիւրադ իտէ- ճէք օլուր իսէ , Բուսիա՝ հա Ձին իշիւն պէպէտիկի թասափուրաթըն- տան վազ կէշմէկէ վէ հախօտ Ձին իմբէրաթօրը իլէ էլ էլէ վէրուպ չու իւշ ճէսամէթլի տէվլէթլէրէ գար- չը իլանը հարպ իթմէկէ ճէսարէթ իպրազ էլլէմէլի տիր :

Իշթէ պուկիւն ագասի Շարգ աշվալը պու կէրկիլիքտէ օլուպ , եարըն նէ՝ րէնկ քէսպ իտէճէկի տէ թէլէկրաֆլարտան ալընաճազ հա- վատէսլէրէ իսթինատ օլընապի- լիւր :

(*) Ձինլիլէր քէնտի իմբէրաթօրա- ընա պու սըֆաթը վէրիլէր (Երկնա- յին կայսրութիւն) :

ՁԱՐԸՆ

ՄՈՒՀԻՄ ՊԻՐ ԹԵՔԼԻՖԻ

— Բուս իմբէրաթօրը Նիքօլա- իքինճի պիւթիւն տէվլէթլէրէ խի- թապ պիր պէյաննամէ նէշրի իլէ , սուլհը ումուսի մուհաֆազայա վէ միլլէթ ու տէվլէթլէրին էօմր ու իգպալինի թէմին իտէպիլէկէ հէ- քեանէ թարիգ օլարազ՝ գաթիէն մուհարէպէլէրին էօնիւնիւ ալ- մազ իշիւն , տէվլէթլէր պէյնինտէ մէզուկիլէթի թամմէյի հայիզ պիր հէյէթի հաքիմէյէ թէշքիլ ու թա- յին իտիլմէսինի , վէ մէզքիւր հէ- յէթ՝ տէվլէթլէրին հէքտիկէրինէ գարշը միւնազալայա սէպէպիլէթ վէրէն հէր պիր մէսէլէյի միւզէ- քէրէ իտուպ , սուրէթի գաթիլէ- տէ թահթը գարարա ալմազլէ , պու գարար պիլա իթիւրազ թա- րաֆէյնտէն գապուլ իտիլէսինի , վէ պինաէն ալէյն գուվլէի ճէպ- րիյէ իսթիմալընա հաճէթ գալմա- յաճաղընտան , տէվլէթլէրին ու է- հալինին բէրիշանիլէթինէ հէքա- նէ սէպէպ օլան թէրթիպաթը հար- պիլէ վէ աքքէրիլէնին ալա լու- գումը գալմալուպ , անլէրի լաղվ իթմէլին իգթիլաւընը իզաճ իթ- միշ վէ պու պապտա հէր պիր տէվ- լէթին րէյինի իսթիհսալ իթմէք Ձար հազրէթլէրինին տըղուի մութլազը օլտըղը պէյան օլընմըշ տըր :

Ձարըն իշպու պէյաննամէսի պու կիւն պիւթիւն էվրօթա ճէրիտէլէ- րին սիւթուլարընը իշղալ վէ էր- պապը սիւսիւնըն միւթալէասընը ճէլպ իթմիշ տիր :

Մ. ԱՄԵՐԻԳԱ. — ՍՊԱՆԻԱ

— Ֆիլիբին ատալարընտա եէր- լիլէր բէք հիտտէթլի տափրանմազ- տա օլուպ , ասըլարըն րէյիսի Ա- կինալուտ տախի ասըլարտան թէ- շէքքի իթմէք հալինտէ տիր , զիրա հէրլիլէր Ամէրիգալըլար իլէ տախի իսթիլաֆտա տըրլար : Մանիլատա պուլընան Սպանիա ասքէրլէրին հալի տէ թէհլիքէտէն խալի տէկիլ տիր : Մ. Սալաթա (Սպանիա վիւքէլա րէյիսի) Մանիլատաքի ասքէրլէրի վիսայաս ատալարնա շէքքէք էֆքեհարընտա իսէ տէ , պու պապտէ Ամէրիգալըլարըն րէյինի ալմազ իգթիլալ իտէճէք տիր , զիրա Մանիլատաքի Սպանիօլար Ամէրիգալըլարըն էլինէ եէսիր տիւշմիշլէր տիր :

— Ամէրիգալըլար Գուպտա մէզհէպ տէրպէրինի մէնն իտուպ , ինկիլիքճէ թահսիլինէ իճպար իթ- մէքտէ իմիլլէր :

Պիզ Ամէրիգալըլարտան պէօլլէ շէյ պէքէմէլիզ , պու հափատիս էսասսըզ օլմալը :

Մարէշալ Պլանդօ թէլէկրաֆլէ պիլտիլմիշ տիր քի , Մարսիմօ Կօ- մէզին (ասըլար րէյիսի , ասլը ըս- պանիալը) թահթը գօմանտալընտա պուլընան Ամէրիգալըլար աճ հալ- տէ հափանայա եէլթիլմիշլէր , Գու- պալըլար անլէրէ գարշը պէտ մու- ամէլէ իթմէքտէ իմիլլէր :

Մար Բիլիլինին պիր մուհիպ տօսթը տէմիշ տիր « 20 սէնէ Գու- պայը պիզ իտարէ իտէճէկիզ վէ ալընան իրատը մահէլինէ վէ 40 պին քիշի օրատա սազլամայա սայֆ իտիլէճէք : Ամէրիգա տատայա 1 1/2 միլիար սէրմայէ թախսիս իտէճէք տիր : Նիհայէթ պու թարգ- լէ հէմ պիլէ վէ հէմտէ ինսանի- յէթէ պիր էյլիք հարմըլ օլաճա- ղըղ » :

Գուպա ասըլարըն եէրլի զէնկիւն- լէրէ թէհտիտաթլը մէթթուպար հօլլարօրլար :

ՄԻԻԹԵՆԵՎ ՎԻԵ

— Պիր միւտտէթտէն պէրու Ա- րապիլիտէ հապա օլընմըշ օլան միլլէթտալարըմըղտան տօգուզ քիշիլին միւճրիմիլլէթլէրինէ տա- յիր էվրազը մահէլին հէյէթը ի- թամիլէսի (ամբաստանիչ ատեան) թարաֆընտան թէտըզը օլընուպ օգոստոս 2 տէ մէնը մուհաքէմէյէ գարար վէրիլմիշ վէ մահպուսին տէրպէստ պրազըլմըշ տըր :

— Կիրիտտէ պուլընան ամիրալ- լարա տէվլէթլէրտէն մէզուկիլէթ կէլուպ , ատանըն էօշիւրլէրինի քէնտիլէր թահսիլ ու թէճէմիլ- իտէրէք , թէշքիլ օլընաճազ եէնի իտարէնին մէսարիֆաթընա թախ- սիս իտէճէքլէր տիր : Պու մէզու- նիլլէթտէն ումուս էհալի մէֆուսն օլմըշ իսէ տէ , Թիւրք հիւքիւմէթի պուլնա գարշը բրօթէթ իթմիշ տիր :

Ամիրալար կէօմրիւքլէրի տախի քէնտի էլլէրինէ ալմազ իսթէմիշ- լէր , տէվլէթլէրին էքսէրիսի պու- նա տէ հիւսնի րիգա կէօսթէրմիշ վէ տիկէրլէրի տէ մանի օլմայաճազ ըմըլար :

— Թաշմըզըն Թէհրանտան ալ- տըղը հափատիսէ կէօրէ , թալ- ընգտէ իսթիլալ զուհուր իթմիշ օլուպ , 50 քիշի էօլմիւշ վէ պազը էվլէր սօյըլմըշ :

Պու իսթիլալ պաշլըճա զախիլէ սահիպի օլանլարա գարշը ըմըշ : Շու հափատիսի կափկատիս կազէ- թալարը թաստիգ իթմէտիքտէն մատա , պէյանը թատաճիւպ պիլէ իտէյօրլար :

— Մէմէքէթլէրինէ ալտէթ իթ- մէքտէ օլան Սպանիա ասքէրլէրի , թէրք իտիլմէքտէ օլան ատալարըն եէրլի էհալիլինէ գարշը սուրէթի վահշիտանտէ հարէքիտաթտա պու- լընըլար ըմըշ , վէ եէրլի էհալիտէ Ամէրիգալըլարը իմտատա չաղը- ըրլար ըմըշ :

Պու հափատիլէրէ պինաէն , Սպանիօլար սօն նօգթատա պիր վահշէթ ալամէթի տահա կէօս- թէրմէքտէ պուլընը յօրլար տէմէք տիր :

— Սատտէթտին բաշա թէքրար Պէրանա (Արնաուտըզ) ալտէթ իտէճէք , իւքիւպ վալիսինին ալ- տըղը մալիւմաթա կէօրէ Գարա- տաղ պինօրընա եազըն Գարատաղ- լըլար 3 թիւրք էօլտիւրմիւշլէր : պու սէպէպլէ էհալի հիտտէթլէն միշ :

Գաթիլլէրի ճէզայա չարմազ իշիւն Սուլթան Բրէնա Նիքիլթայա թափսիյէ իթմիշ տիր :

ՏԸԳԳԱԹ

Տիւնհանըն հէր պիր թարաֆըն- տա կազէթա պէտէլլէրինի բէշին էօտէմէք ումուսին գապուլ օլըն- մըշ պիր գայիտէ օլտըղը հալտէ , պիլիմ կազէթանըն սէնէի հալի- յէսինին սէքիլինճի ալը տախի իսթիմալ պուլմազտա օլուպ , չօգ- լար էլան իյֆաի տէյն իթմէմիշ օլտըղլարը սէպէպլէ , պու տէֆա լաղպէթլու ապօնէլէրիմիլլին պի- լա թէէլիլի կազէթա պէտէլլէրինի կէօնտէրմէլէրի խասսաթէն րէճա վէ իսթիլհամ օլուսուր :

Մէքթուպ վէ ազճէ տօղրու- տան տօղրու իրաւաւնքըն իսմինէ հօլլամալը տըր :

Խմբ. Իիւաւաւնքի

ԹԵՇԵՔԻԻԻՐԱԹ

Եիկիրմի տէօրթ սէնէտէն պէ- ըու պէնի ըլտըրապա տիւշար իթ- միշ օլան հիւրիլ (հարըմըզ) խա- թալըղընտան վէ պու եիւզտէն սաիր իլէթ վէ միճալսըլըղլար- տան շիֆայապ օլապիլմէք իւզրէ Պուլկարիտա վէ Սթպիպօլտա չօգ թապիպլէրէ միւրաճաթ իթ- միշ օլտըղըմ հալտէ , հիշ պիր ֆա-

լտէ կէօրմէտիկիմտէն , թարի օ- լան խասթալըզ կիւն պէ կիւն ի- լէրլէյուպ , զայրը հայաթըմը թէհ- լիքէի միւտտէլէյէ սէվզ էլլէլէճէ- կինտէն , նիհայէթ պուստոն պիր ալ էվլէլ , Պուքրէշտէ Ֆիլանթրօ- ֆի նամ խասթալտանէյէ միւրաճա- աթ իթտիմ :

Մէզքիւր խասթալտանէ հէքիմ- լէրինտէն թապիլի մէհուր Տօքթ. Նանօնըն մէհարէթի ֆէվզէլատէ իլէ իճրա իթտիկի օքէրաւիօնը (*) վէ Տօքթ. Ֆրօթօնըն հիւսնի խըտ- մէթ ու տըգգաթը սայէսինտէ 18 կիւն զարֆընտա շիֆաւապ օլուպ , սըհհէթիմ պէրքէմալ օլարազ աի- լէմ նէզտինէ ալտէթ իթմէկէ մու- վաֆազ օլտուս :

Սըհհէթիմ ու հայաթըմը հէ- նի պաշտան մէճանէն պանա պա- ղըլաւմըլ օլան մէզքիւր խասթա- հանէին իտարէի պէհիլէսինէ վէ պա խուսուս մուստիլէյն Տօքթօր- լարա իլա նիհայէթ իւլ էմր մի- միլնէթտար վէ միւթէշէրլար պու- լընաղըմը ալէնէն պէյան իտէրիմ :

Սարգիս Ուգուկ—Պօղոսեան

(*) Մէզքիւր խասթալըզ սէպէպի ի- լէ պօղուլմիշ օլուպ , պաղարըղլարը- մը գաթլայան 1 1/2 քիլօ մըգատարընտա եաղ տախի իիւրաճ իտիլմիշ տիր :

ՁԱԽԻՐԷ ԲԻԱՑԱՍԸ

վառնա 1 Աղրաթու Պոդոտայ վալօն Արապա , լիպրա 55-60 հէքթօլ 8-11 ֆրանք Արքա լիպրա 42-50 , հէքթօլ 4.60-5.20 ֆ. Ֆաստայիւս 100 օգ. 17-24 ֆրանք՝ մալա կէօրէ Եռչաֆ Արապա 20-25 ֆիլաթ 3.60-4 ֆր. Տարր Արապա 5-6 լիպրա 58-60 ֆիլ. 4.60-5. Կիւնտէ 300—350 արապա պուլ- տայ, 100-120 արապա արա կէլմէք- տէ տիր. Ֆաստայիւս 70-80 արապա : Արապա մուսմէլէսի՝ Նուրօլէոն 21 ֆո. հիւսապ իլէ տիր :

ԱՂՋԱՆՑ ԵՒ ՓՈՌՈՒՄԱՆՁԵՐՈՒ ԹՈՇԱԿԱԻՈՐ ԴՊՐՈՑ Ի ՎԱՐՆԱ

Ա. ԱՄԻՐԻԱՆԻԱՆՑ Հայրէն , Կրօպական լեղունը , Բիւնօ՝ Օր. Լ. Ամիրխանեանցի վարչութեամբ յառաջիկայ սեպ- տեմբերէն սկսեալ :

Միքայիլ խպէհան ի Պուրկազ , որ 6 ամիսէ ի վեր իր առուտորը գաղրիցուցած էր անձնական գոր- ծեր կարգադրելու համար , կը ծա- նուցանէ թէ Օգոստ. 1 էն սկսեալ պիտի շարունակէ առաջուան նը- ման փոխանակազրի գործը , Կ. Պոլսոյ, Չիւրիւքիոյ, Ռուսաստանի, Մշոյ, Բաղէշի և ուրիշ տեղերու վրայ , գոհացուցիչ պայմաններով և կապակցութիւն ունենալով Տ.Տ. Բոսնիան եղբարց հետ : 2-5

Отоговорникъ М. Скововъ Печ. „Взаимность“ Варна.